# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱԵՄՁԻ ՍՊԸ-ն ԵԲԿ-ԵԱՃԱՊՁԲ-26/31 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 28 | ախտահանիչ հեղուկ նյութեր | ախտահանիչ հեղուկ նյութեր | ախտահանիչ հեղուկ նյութեր | Չինաստան<br>Հնդկաստան<br>Ռուսաստան<br>Ուկրաինա<br>Բելառուսիա<br>Եվրոպա | "Բաղադրությունը- իրենից ներկայացնում է կանաչ գույնի, բուրանյութի հոտով թափանցիկ հեղուկ խտանյութ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է N,N-դիդեցիլ-N-մեթիլ-պոլի(օքսիէթիլ) ամոնիումի պրոպիոնատ (ՉԱՄ), դիդեցիլ դիմեթիլ ամոնիումի քլորիդ (ՉԱՄ), ֆերմենտների համալիր (լիպազա, ալֆա-ամիլազա, պրոտեազա), ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրամասեր՝ ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), ներկանյութ, բուրանյութ, ջուր և այլն: Ներկայացվող ապրանքը պետք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս , քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ `գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ` տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում` կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը մինչև 5-30 րոպեում (ինչը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով), ինչպես նաև օժտված լինի ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչների նկատմամբ: : Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի` ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 10 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 7,8-8,8: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ, պետք է երաշխավորված լինի կամ Storz, կամ Olympus, կամ Fujinon, կամ Pentex բժշկական սարքավորումներ արտադրող ընկերությունների կողմից՝ նյութի պատճառով սարքավորման խափանումից խուսափելու համար: " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АЕМДЖИ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/31 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 28 | | | | | |